ՆՈՐ-ԴԱՐ

№ 61 ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 13 Ապրիլի **1901** Ուրբաթ, 13 Ապրիլի ՏԱՍՆԵՒՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 61

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր.50 կ., ամիսը՝ 1 ր., համար 5 կ.։ Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ Даръ" կամ Tiflis, Rédaction „Nor-Dar"

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին 2 կ., ռեկլամների համար կրկնապատիկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Քրոնիկոն.—Լուրեր։
Մեզ գրում են.—Ղազախից։
Նամակ խմբագրութեան։
Բացուի ատգնաողը։
Թղթակցութիւններ.—Ղազախից։
Եւրոպական սուրհանդակ։
Քաղաքական.—Իտալիա։ Անգլիա։ Չինաստան։
Հեռագրական լուրեր։
Թեր և դէմ։
Բանասիրական.—Գիտական շարժում։
Տեղեկատու։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

Կովկասի անասնաբուժական մասի կառավարիչը մի շրջաբերականով հաղորդել է անասնաբոյժներին և ոստիկանութեանը, թէ՝ ի նկատի ունենալով որ Անդրկովկասում եղջիւրաւոր անասունների ժանտախտը բաւական տարածուած է՝ խիստ անհրաժեշտ է մեծ հսկողութիւն ունենալ երկաթուղիներով փոխադրւող ամեն տեսակ եղջիւրաւոր անասունների վրայ առհասարակ, և առողջ անասունների համար հարկաւոր վկայաթղթերը պէտք է տան բացառապէս այն տեղի անասնաբոյժները, որտեղից որ փոխադրւում են անասունները։

— Կովկասի գիւղատնտեսական ընկերութեան մէջ ստացուած տեղեկութիւններից երևում է, որ Ձուլաւերի շրջակայքում և Բորչալուի գաւառում աւելի քան հազար դեսեատին տարածութեան վրայ դաշտային մկները ոչնչացրել էին հացահատիկների աշնանացանը։ Գիւղացիներն ստիպուած էին եղել դաշտերը նորից վարել և գարնանացան անել, և այդ նոր ցանքսերին էլ ներկայումս երաշտն է սպառնում։

— Կովկասի գիւղատնտեսական արդիւնաբերական ցուցահանդէսը, որի բացումը նշանակուած է օգոստոսի 20-ին, պարունակելու է հետևեալ 18 բաժինները. 1) երկրագործութիւն, 2) այգեգործութիւն և գինեգործութիւն, 3) այգիների և բանջարանոցների սերմեր, տնկարաններ և մատղաշատունկ ծառեր, 4) զարդարանքի բուսեղէն, 5) պտղաբուծութիւն, բանջարանոցապանութիւն, 6) անտառաբուծութիւն, 7) ընտանի կենդանիներ, 8) կաթնատնտեսութեան և անասնապահութեան բերքեր, 9) շերամապահութիւն և մեղուաբուծութիւն, 10) ձկնորսութիւն և որսորդութիւն, 11) երկրագործական գործիքներ և մեքենաներ, 12) տնայնագործական և արհեստագործական արդիւնաբերութիւն, 13) գործարանային արդիւնաբերութիւն, 14) հանքային, 15) մանկավարժական, 16) գիտնական վիճակագրական, 17) գիտնական-դպրոցական, 18) գեղարուեստական։

— Այգեգործութեան և պտղաբուծութեան ռուսաց Կայսերական ընկերութեան Կովկասի ճիւղը հրաւէր է ստացել մասնակցելու ֆրանսիական այգեգործութեան ընկերութեան ձեռներէցութեամբ առաջիկայ մայիսի 29-ին Պարիզում տեղի ունենալիք այգեգործների 17-րդ համաժողովին։

— Մենք ստացանք Կուկիայի Նարաշէն ս. Աստուածածին եկեղեցու երէցփոխ ինժիներ պ. Նիկողայոս Գրիգորեանի եռամեայ (1898, 1899 և 1900 թ.թ.) գործունէութեան համառօտ հաշիւը, որից երևում է, թէ եկեղեցին յիշեալ երեք տարուայ ընթացքում մուտք ունեցել է 9918 ր. 99½ կ., իսկ ելք՝ 6634 ր. 31 կ.։ Եկեղեցին առ 1-ն յունուարի 1901 թ. ունի 1850 ր. 59½ կ., բացի այդ՝ ունի նոյնպէս ստանալիք ապառիկ 90 ր.։

— Խմբագրութիւնս ստացաւ հետևեալ նորագոյն հրատարակութիւնները. 1) Գաբրիէլ Սունդուկեանց — «Գիշերվան սաբրը խէր է», կատակ. մէկ արար., ուղղուած, երկրորդ տպագր., Թիֆլիս, 1901 թ., էջ 36, գինը 30 կ.։ 2) Մ. Սեբահեդդին և Ա. Լուտֆուլլահ (Սուլթան Աբդուլ-Մէջիդի թոռներ) -«Appel général aux ottomans» («Ընդհանուր կոչ թիւրքիացիներին»), Կահիրէ, էջ 8, գինը և թուականը նշանակուած չեն։

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՂԱԶԱԽԻՑ. — Մեր քաղաքային ուսումնարանում թուրքաց կրօնուսոյցը թուրք մոլլան է, ռուսացը՝ ռուս քահանան, իսկ հայոց կրօնուսոյցը մի աշխարհական ոք, չնայելով որ Ղազախ քաղաքում կայ կրօնն ուսուցանելու համար մի ձեռնհաս քահանայ։

—Արտերը խոստանում են առատութիւն, բայց երաշտն արդէն բաւականին գործ է տեսել ի վնաս չինականների։ Գիւղացիք—թուրք ու հայ չարունակ դիմում են քահանային, թէ ո՞րբ պէտք է անձրև գայ. մի քահանայ խիստ մտածելու բան ասաց այդ մասին թէ՝ «ախպէր, ուստա էլ հատաւ, գործն էլ. ասում եմ հինգ օրից, 10 օրից յետոյ պիտի անձրև գայ, օրերն անց են կենում, իսկ ես մնում եմ ժողովրդի առաջ խայտառակուած. չգիտեմ ինչ անեմ»։

—Գողութիւնը համարեա թէ դադարել է նախկինի հետ համեմատած։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մեծարգոյ պ. խմբագիր,

Պատուական «Նոր Դար»-ի 48-րդ համարում զաւեշտական «Հայելի» ի խմբագիր պ. Փառնակէսը մի ծաղր է գրել «Ջուշու մի քանի օրիորդ ինտելիգենտկաների» համար։ Ծաղրը սրամիտ է, առաջարկութիւնը զաւեշտական, բայց ճշմարտութիւնից հեռու, վասնզի պ. Օրիոնի գրածը «Նոր-Դար»-ի 29 րդ համարում, որ հիմք է ծառայել ֆելիէտոնիստին, սխալներ ունի իր մէջ։

Երկու օրիորդի կամ, ըստ թղթակցի, «ինտելիգենտկաների» մեղադրանքը կապ ունի դպրանոցի և հետևաբար նրա վարչութեան հետ, և որովհետև ես շատ աւելի անտարբերութեամբ կարող եմ յանիրաւի մեղադրանք լսել կամ կարդալ իմ անձի վերաբերութեամբ՝ քան այլոց, որոնք ծաղրւում են ինձ յանձնուած հաստատութեան պատճառով, ուստի բարոյական պարտուց ճնշուած ստիպուած եմ մի քանի խօսք գրել։

Պ. Օրիոնի հաղորդածը՝ թէ դպ. վարչութիւնը պատշաճաւոր թոյլտւութիւն ստացաւ երկու ներկայացումն տալու յօգուտ դպ. աղքատ աշակերտների և թէ օրիորդներն իրենց տուած խոստումը չկատարեցին, ուստի և ներկայացումն յետաձգուեցաւ,—ուղիղ է. սակայն խօստումն յետ վերցնելու մեկնութիւնը սխալ է և կարի վիրաւորական։ Երկու օրիորդները երկու չեն տան բերեկիրթ զաւակներ են և այնքան բանիբուն, որ իրենց դպրանոցի բարի գործին կուսակցական աչքով չէին նայիլ և ոչ կըշփոթէին հաստատութիւնն անձնաւորութեան հետ. ապա ուրեմն «Չենք կարող, որովհետև խաղացող վարժապետները նոր-դարական են» խօսքը նրանցը չէր կարող լինել. լաւ կանէր պ. Օրիոնը, եթէ գոյն խօսքի հեղինակին գտնէր, որ անշուշտ «ինտելիգենտ» կամ ժամանակակից «ասպետ» է և ոչ օրիորդ։ Որքան ինձ յայտնի է, օրիորդներն ուզեցել են իմանալ, թէ ինչ երիտասարդների հետ պիտի բեմ ելնեն. ոչ թէ նոր-դարական կամ մի այլական, այլ թէ ո՞րպիսի վարկ ունեցող մարդոց հետ պիտի խաղան. բայց մի՞թէ յանցանք է, որ հայ պատուաւէր աղջիկը, որ անծանօթ է խաղացող երիտասարդներին, ուզում է բարի վարկ ունեցող մարդկանց հետ երևալ միայն հասարակութեան աչքին. ես կը ցանկայի, որ ամեն հայուհի նախ քան մի գործ սկսելը հայի հետ՝ նրա վարկովն ու վարքովը հետաքրքրուէր*)։

Երկրորդ՝ ներկայացման նիւթերը մեր ակնկալութեան հակառակ ուշ ստացանք, մինչև պահոց օրերը ժամանակը քիչ մնաց և օրիորդներն անկարող համարեցին իրենց կարճ միջոցում պատրաստուել, մանաւանդ թէ անձնական գործեր ևս ունէին, մերժեցին. մի պատճառ էլ այս է։ Ցիրաւի, ինձ ևս թւում էր, թէ այդքան ժամանակում կարելի էր պատրաստուել, բայց մի՞թէ մենք իրաւունք

*) Շատ լաւ կլինէր։ Խմբ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

—

ԳԻՏԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Արագաշարժ նաւ.—Բրուկլինի ինժիներներից մէկը, Ռիչարդ Վէյս, երկար տարիներ աշխատելուց յետոյ հնարել է մի նաւ, որը պէտք է մինչև այժմս յայտնի նաւերից անհամեմատ առաջ ընթանայ։ Սրա գլխաւոր տարբերութիւնն այն է, որ պտուտակը ոչ թէ նաւի ետևից է շինուած, այլ առաջից, մի առանձին խողովակի մէջ զետեղուած։ Պտուտակը ներս է քաշում ջուրը և երկու խողովակների միջոցով, նաւի կիսում, դուրս գցում։ Այսպիսով ուրեմն կրկնակի ոյժ է առաջանում.—մէկ ջուրը ներս քաշելուց, և երկրորդ ջուրը դուրս թողնելուց։ Միևնոյն ժամանակ ծովի մէջ ջրի ընդդիմութիւնն էլ էապէս նւազում է և նաւի շարժումն արագանում։ Նոյնպէս մեծ նշանակութիւն ունի այն հանգամանքը, որ ոչ մի ալիք նաւի ցըռուկը չի տատանում, այլ պտուտակը դանակի պէս կտրում է ալիքներն ու անցնում։

—

Ելեկտրական թնդանօթ.—Ամերիկացի ելեկտրագէտ Գարդները հնարել է մի թնդանօթ, որի ռումբը ելեկտրական հոսանքի ուժով է շարժւում, ուստի և ոչ ծուխ է արձակում, ոչ գազ և ոչ յետ մղող ոյժ առաջացնում. կարելի է մի րոպէում 60 ռումբ արձակել։ Ցայտնի է, որ պտուտակը (սոլէնօիդ), երբ նրա միջից ելեկտրական հոսանք անցնի, գէպի իրեն է քաշում երկաթէ ձողը, և վերջինս դառնում է մագնիս ու սկսում պտոյտի ներսը գնալ. և այդ միջոցին ձգողական ոյժը հաւասար է լինում ելեկտրական հոսանքի ոյժի քառակուսուն։ Այս թնդանօթի ռումբը պիտի բանէ երկաթէ ձողի տեղը և 30 պտոյտի միջով անցնելով դուրս պիտի թռչի մի վայրկեանում 15 մետր արագութեամբ։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այսպիսի թնդանօթները կարող չեն արշաւանքի ժամանակ գործ դրուել, այլ միայն նաւերի մէջ և մարտկոցներում ու բերդերում, որովհետև ելեկտրական հոսանք առաջացնելու համար հարկաւոր են յատուկ յարմարութիւններ։

—

Աւտոմոբիլը պատերազմի համար.—Աւտոմոբիլները (ինքնաշարժ կառքերը) քանի գնում աւելի ու աւելի են տարածւում կեանքի մէջ։ Եւրոպայում այդ տեսակ կառքերը բազմատեսակ են, զանազան սիստեմների։ Ռուսիայում էլ արդէն գործ են ածւում դրանք. իսկ վերջերըս էլ գերմանական բանակի մէջ փորձեր են անում ինքնաշարժ կառքերը պատերազմական զանազան նպատակների գործածելու համար։ Օս առաջին փորձն է։ Երկաթուղային գուարդիայի զինուորներն ամենայն օր ինքնաշարժ կառքեր նստած շրջում են զանազան կողմեր և դիտողութիւններ անում, թէ ինչպիսի տեղերում ինչպէս է շարժւում կառքը։ Այդ աւտոմոբիլը շարժւում է բենզինով և ժամը 40 կիլոմետր արագութիւն է անցնում։ Ինչ առել կուզէ, որ դա թէպէտ ընդհանուր կազմութեամբ նման է սովորական աւտոմոբիլներին, բայց աւելի յարմարեցրած է որոշեալ նպատակի համար։ Չեր Տինի աւտոմոբիլի նման է, որ գործ է ածում քաղաքային փողոցներում շրջելու համար։

—

Ելեկտրաչափ.—Ներկայումս շատ կան այնպիսի գործիքներ, որոնց մէջ մի որոշեալ դրամ ձգելով ցոյց կըտան, թէ մարդս կամ մի որևիցէ առարկայ ինչ ծանրութիւն, ինչ ոյժ ունի, կամ թէ չէ՝ այս կամ այն եղանակը կընուագեն, կամ պապիրոս, լուցկի, քաղցրեղէն և այլ առարկաներ կըտան։ Ով որ եւրոպական քաղաքներում եղել է, շատ անգամ նկատած կըլինի այդպիսի բաներ, որ մեծ դիւրութիւն է ի հարկէ բնակիչների համար։ Լուցկիդ վերջացել է, գործիքի մէջ կըգցես որոշեալ փողը և գործիքն ինքն իրեն քեզ համար դուրս կըգցէ իր միջից մի տուփ լուցկի և այլն։ Պետերբուրգում մի պանդոկի մէջ կայ մի այդպիսի գործիք, որի մէջ ձըգելով որոշեալ դրամը կըստանաք մի բաժին թաք կերակուր։ Վերջերս նման մի գործիք է հնարուած նաև ելեկտրական ոյժից օգտուելու համար՝—բաժանորդը որոշեալ դրամ ձգելով գործիքի մէջ կարող է օգտուել որոշեալ չափով ելեկտրական ոյժից, օրինակ, լուսաւորութեան համար, որով և շատ անախորժութիւնների առաջն է առնւում։

—

Հրացոյց գործիք.—Մի քանի տեսակ գործիքներ կան, որոնք զգուշացնում են մարդկանց, երբ սենեակում ջերմութեան աստիճանը սովորականից աւելանում է։ Մի տեսակը կազմուած է այսպէս. երկու տարբեր ջերմունակ մետաղի բարակ շերտեր միացնում են իրար. հէնց որ ջերմութեան աստիճանը բարձրանում է, այդ շերտերն սկսում են լայնանալ՝ տարբեր չափով. ջերմութեան որոշեալ աստիճանն անցնելուց յետոյ նրանք կպչում են ելեկտրական թելին, որը միացած լինելով ելեկտրական զանգի հետ, սկսում է վերջինս զնգացնել։ Այս գործիքն այնքան զգայուն է, որ կարելի է նրան յարմարեցնել ամեն աստիճանի ջերմութեան համար։ Եթէ, օրինակ, սենեակում ամենաշատը 15—16° ջերմութիւն է լինում, կարելի է այնպէս անել, որ գործիքն սկսէ զնգացնել, երբ ջերմութիւնը 17—18°-ի հասնի։ Այսպիսի գործիքներ շատ կան և դրանք սովորաբար գործ են ածւում այն տեղերում, ուր հասարակութիւն է հաւաքւում, ուր երկիւղ կայ վտանգի։ Այդպիսի գործիքներ կան նաև հետևեալ կերպով կազմուած.—երևակայեցէք մի լծակ, որի մի ծայրը կպցրած է դիւրահալ նիւթի հետ, ասենք ստէարինի հետ։ Հէնց որ ջերմութիւնը որոշեալ աստիճանից անցնի, ստէարինը կըհալուի, լծակի ծայրը կազատուի և միւս ծայրը կըմիանայ ելեկտրական թելի հետ, որի շնորհիւ էլ ելեկտրական զանգը կըսկսի զնգացնել, վտանգի մասին տեղեկութիւն տալ։

—

Կապիտան Ցէյի հրացանը.—Իտալացի կապիտան Բերսալիէրի Ցէյ դեռ 1895 թուին մասնագէտների առաջ փորձել էր իր մի հրացանը, որ գործում է ինչպէս միտրալեօզ (արագահար թնդանօթ)։ Վերջին հինգ տարուայ ընթացքում Ցէյը կատարելագործում էր իր գիւտը, և այժմ հաւատացնում է, որ իր գտածն ամենալաւն է բոլոր հրացանների մէջ։ Այդ հրացանն իտալական զաբալինայից ոչ մեծ է և ոչ ծանր, իսկ գնդակի ոյժն ու գնացած տարածութիւնը մանրաչափ հրացաններից պակաս չէ։ Բայց սրա առաւելութիւնն այն է, որ 2—3 րոպէում կարելի է, առանց հրացանի գիրքը փոխելու 100 գնդակ արձակել։ Գնդակի սկզբնական արագութիւնը 300 սաժէն է մի վայրկեանում, իսկ արձակուած գնդակները միմեանցից 20 սաժէն հեռաւորութեամբ են թըռչում։

—

Ձայնախօս ժամացոյց.—Արդէն ամենքս է գիտենք, թէ ինչ բան է ձայնախօսը, ֆոնոգրաֆը. այդ գործիքի շնորհիւ կարելի է գրի առնել ամեն մի խօսք, ամեն մի ձայն և յետոյ հարիւրաւոր անգամ կրկնել տալ։ Այժմ ձայնախօսը յարմարեցրել են ժամացոյցի համար, այնպէս որ փոխանակ ժամացոյցը խփելու 11 կամ 12 անգամ, հէնց որ ժամանակն եկաւ, մէկ էլ տեսար ժամացոյցի միջից կըլսէք մի ձայն. «լսեցէք, ժամը տասն մէկն է» կամ «կէս օր է», կամ «կէս գիշեր է» և այլն։ Ժամացոյցի կազմութիւնը մնում է նոյնը, միայն խփելու գործիքի տեղ պիտի դրուի ձայնախօսը։ Կարելի է այնպէս յարմարեցնել, որ մնացած ժամանակն էլ ձայնախօսն այս կամ այն պիէսը նուագի։

—

Մայեօր Կրեմպտոնի գիւտը.—Երբեմն հարկաւոր է լինում ժամանակաւորապէս հեռախօս սարքել երկու կէտերի միջև, ինչպէս՝ օրինակ՝ պատերազմի միջոցին։ Այդ բանը հեշտացնելու համար մայեօր Կրեմպտոնը, որ ներկայումս հարաւային Աֆրիկայումն է գտնւում, այսպէս է դիւրացրել գործը.—երեք անուաւոր հեծանուի ետևի սանին ներկայացնում է մի գլան, որի վրայ փաթաթուած է հեռախօսի թելը, որ սովորական պղնձի թել է։ Որպէս զի

ունինք կասկածելու նրանց պատասխանի վրայ, քանի որ ոչ նրանց ընդունակութեանց և ոչ անձնական գործերի հետ ենք ծանօթ։

Ցաւենայն դէպս, օրիորդներին կուսակցական ոգի վերագրելն այս դէպքում սխալ է. սխալ է նաև նամակի ոճն ընդհանրապէս, զի ընթերցողն այն տպաւորութիւնը կըստանայ՝ իբր թէ այստեղ կուսակցական շահատակութիւններ են տեղի ունենում. մինչդեռ ոչինչ նման բան չկայ և, եթէ հայ ժողովուրդը բացել է իւր աչքը, չի էլ լինելու։

Բայց պ. Օրիոնի թղթակցութիւնը կազմուել է անշուշտ մի քանի լուրերի ազդեցութեամբ, որոնք յիրաւի և իմ ականջին հասան. հաստատ համոզուած եմ, որ լուրերի հեղինակները, ինչպէս և ատելութեան կրակ բորբոքողները, էլի տղամարդ կոչուած կիսամարդիկն են, ուստի պ. Օրիոնը հասցէի մէջ սխալ է արել։

Մի բարոյական պարտք վերջին խօսքս թող լինի մի շարք թղթակիցներին և անձնական միտումներով առաջնորդուող բարձրավիզ «ինտելիգէնտներին»։ Պարոններ, շուռ եկէք և ձեր ետևը թողած բարոյական աւերակները տեսէք, որոնք նեղ կուսակցական ոգու բերքն են. հայ ժողովուրդը յոգնել է, սիրոյ և խաղաղութեան պէտք ունի. ատելութեան կրակով մի հրդեհէք ձեր հայրենի քաղաքն ու հաստատութիւնները և ներոնի ախորժակով մի զուարճանաք նրանց բոցերով։

Բենիկ վարդապետ

Զուչի, 24 մարտի

ԲԱԳՈՒԻ ՏԱԳՆԱՊԸ

—

Ո՞վ էր մտածում, թէ զատկական տօների առթիւ 3-4 օր ուրախութիւն վայելելուց յետոյ յանկարծ պէտք է մի այնպիսի դրութիւն տիրել, որ ոչ միայն հիասթափեցնի, այլ և յուսահատեցնի, խոշոր նաւթարդիւնաբերողներին ընդհանրապէս և փոքր ֆիրմաներին մասնաւորապէս։ Դեռ մինչև օրս էլ յիշում են „99 թուականի տագնապը, երբ շատերի — փոքր կապիտալիստների—աչքն բանկերը փակեցին իրենց դռները. և տիրեց փողի սոսկալի պակասութիւն, մինչև իսկ ճգնաժամ, որով և շատ մարդիկ սնանկացան և մի քանի տասնեակ հազարներ թողնելով կիսատ մնացած գործի մէջ՝ հեռացան արտասուք թափելով. բայց դա միմիայն փոքր, այն էլ ոչ շատ նաւթ արդիւնաբերողներ էին, որ մի քանի հազարով գործ էին սկսել. դա ողջ նաւթային աշխարհը, ողջ Բագուն չէր. այժմ ցաւը տիրել է ողջ Բագուին, բոլոր հանքատէրերին, և այդ ճգնաժամը ոչ թէ փողի պակասութիւնն է, այլ նաւթի գների ընկնելը և խայտառակ կերպով ընկնելը։ Երեկ էր, ճրագալոյցի շաբաթ օրը, որ դեռ նաւթը 10-10¼ կոպէկ էր, 3 — 4 օր անց կացած յանկարծ իջաւ 9—8½ կոպէկի։ Վա՜յ են տալիս բոլոր հանքատէրերը միասին. ինչ անեն։ Նրանց համար, որոնք կապալով տէրութեան հողեր ունին վերցրած, իսկի ձեռնտու չեն այդ գները։ Շատ քիչ հողեր կան 98 թուականից առաջ աճուրդով վերցրածներից, որ ձեռնտու պայմաններ լինեն ընծայելիս. մնացածներն աւելի գներով են, այն է 6-11 կ. և դեռ աւելի։ Միջին թուով 8½ կ. պետական հարկն է գալիս. հորերի շահագործման ծախք պուդին լինում է 1½—4 կոպ., որ միջին թուով գալիս է 2¾ կոպ., ուրեմն պուդը նստում է ընդհանրապէս 11¼ կոպ.։ Դէ, համեցէք և 8½—9 կոպ. նաւթ ծախեցէք, որ վնաս անէք պուդին 1¼—1¾ կոպ.. Այս վնասից մասամբ ազատւում են նրանք, որոնք ֆանտան ունին, սակայն պէտք է աչքի առաջ ունենալ, որ ֆանտանի նաւթը միշտ ½ կոպէկ պակասով է ծախւում սովորական գնից, եթէ ոչ աւելի պակաս։

Երբ հարցնում ես պատճառը, ոչ ոք չի կարող մի որոշ բան ասել. գլուխները շարժում են և աւելացնում. «գետնի տակի և նաւթային աշխարհի հետ խաղ անել չի լինիլ. Բագուն մի քանի այսպիսի տագնապներ է տեսել»։ Շատերն այս տագնապը վերագրում են ապրիլի 24 ին կայանալիք աճուրդին, որի ժամանակ կապալով տրուելու են Բիբի-Հէյբաթում Շիբայևի, Մանթաշևանի, Վիշաուի, Նոբէլի և Ռոտշիլդի հանքերը, որոնք արդէն գնահատուած են իրենց շարժական և անշարժ կայքերով։ Այդ հանքերի համար տէրութեան հետ կապուած պայմանագրերի ժամանակն արդէն լրացել է. յիշեալ ֆիրմաները մինչև սոյն թուականի սկզբները վճարում էին իւրաքանչիւր դեսեատինին որոշ գումար, որ ինքն ըստ ինքեան շատ չնչին բան է եղել։ «Այժմ աճուրդ է»—ասում են և աշխատում հաստատել, որ յիշեալ ֆիրմաները դիտմամբ օր ըստ օրէ գները գցեցին, որ իրենց ձեռքի հանքերն իրենց վրայ մնան և աժան գնով մնան։ Եւ արդարև, այդ հանքատէրերն այս քանի ամիս է, որ մի կաթիլ նաւթ չէին հանում, և ծախելու դէպքում միշտ ⅛ կամ ¼ կոպ. պակասացնում էին գինը. ստիպուած փոքր հանքատէրը նաւթը ծախելու էր պակասով, բայց մինչև ե՞րբ. Չէ՞ որ այդ մեծ ֆիրմաների 5-10 միլիոնը բաւական է բոլորին սնանկացնելու... Բայց երբ տեղի ունեցաւ ապրիլի 3—4 ի վաճառումը՝ խօսողները բացականչեցին. «սա այնպիսի մի ճգնաժամ է, որ ոչ մի մեծ ֆիրմա ուրախ չէ և հեռու չէ մեծամեծ վնասներ կրելուց»։ Նաւթի ընկնելուն վնասեց այն, որ Ռուսիայում մազութի գինն իջաւ 20 կոպէկից մինչև ի 14 կոպ., արտասահմանում եւս նաւթի գինն իջաւ, իսկ ամերիկացիների մրցումը զօրեղ է. նրանք կարողանում են աժան նստացնել ֆրախտը և ուրիշ ծախքերը, իսկ մերոնք ոչ։ Հերուանից նաւթի քանակութիւնը շատացաւ (թէև այժմ քանի գնում այդ քանակը 1 միլիոնով ամիսը պակասում է), և հանքատէրերը տեղ չունեցան պահելու չծախուած և չարտահանուած նաւթն ու կերոսինը։ Դրանց վրայ աւելացրէք և վագոնների այն նորմիրովկան, որ այս տարի փոխուեց. մինչև այժմ իւրաքանչիւր մէկ գործարանատէր տէրութեան վագոններին իրաւունք ունէր յանձնելու իւր ունեցած կերոսինի ⅓ մասը, այլապէս ասած, որքան պուդ արտահանելու իրաւունք էր ստանում, դրա երկպատիկն էլ պահեստում պէտք է ունենար. այժմ փոխուելով այդ նորմիրովկան՝ գործարանատէրն ստացաւ իրաւունք արտահանելու այնքան, որքան ունի. իսկ առաջուց շնորհիւ նախկին նորմիրովկայի ամբարուել է գործարաններում 30-40 միլիոն պուդ կերոսին, որ ասել է՝ արտահանութեան 6—8 ամսուայ պաշար է, և ի հարկէ մինչև գործարանատէրը իւր հին ապրանքը չսպառցնի՝ նորը չի շինիլ, նաւթ չի առնիլ, և չի առնիլ 6—8 ամիս. իսկ եթէ այդքան ժամանակ նաւթ չծախուի՝ Բագուն կըքանդուի։

Բոլոր հանքատէրերին այժմ տիրել է կատարեալ յուսահատութիւն. թողնեն հեռանան՝ ուղղակի կորցնում են ամեն ինչ. չթողնեն՝ մեծ վնասներ ունեն. մնացել են շուարած. չքաշեն նաւթը՝ բոլոր հորերը կըփչանան, քաշեն՝ տանող չկայ, պահելու տեղ էլ չունեն, բոլորի ամբարներն ու նաւթի շտեմարանները լիքն են։ Մնում է միակ միջոցը, որ ընդհանուր ժողով գումարեն, կառավարութեանը դիմում անեն և խնդրեն, որ վճարները (по пудная плата) պակասեցնէ և կամ թէ մաս ստանայ ստացուած նաւթից կամ ծախուած նաւթի գնից. այլապէս կառավարութիւնն ինքն էլ մեծ վնաս կըկրէ, եթէ հանքերում գործը դադարեցնեն նոյն իսկ մի քանի ամսով։

Մ'Ն-Ցիկ.

Բագու, 4 ապրիլի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

—

ՂԱԶԱԽ, 9 ապրիլի.—Ղազախ քաղաքի գլխաւոր բնակչութիւնը (հայ, թուրք և ռուս) մինչև այսօր հիմնական աղօթատներ չունէր. ժամասացութիւնը կատարւում էր տներում յատկացուած մասնաւոր սենեակներում, իսկ այսօր քաղաքն այցելողը կըտեսնէ իրար հանդէպ երկու նորակառոյց եկեղեցի—մինը հայոց, միւսը ռուսաց, և ապա մի մզկիթ, որ տակաւին չէ աւարտուած, թէև թուրք հասարակութիւնը չի ուզում յետ մնալ քրիստոնեաներից, այլ գիշեր ցերեկ աշխատում է շուտ հասցնել։

Հայոց նորակառոյց եկեղեցին օծուեց ամսոյս 8 ին, իսկ ռուսաց եկեղեցին պէտք է օծուի ամսոյս 19-ին։ Հայոց եկեղեցու հիմնադիրն է հանգուցեալ Մակի Ջաղէթեան, իսկ կառուցողը նրա որդի Ալէքսանդր Ջաղէթեան։ Տեղական ժողովուրդն եկեղեցու կառուցման գործում ոչինչ մասնակցութիւն չունի։ Ռուսաց եկեղեցին շինուել է հասարակութեան հաշւով, իսկ թուրքաց մզկիթը շինւում է միայն թուրք հասարակութեան ջանքերով և հաշւով։

Հանգուցեալ Մակի Ջաղէթեանը, որ թաղուած է նորակառոյց եկեղեցու դրսի որմի տակ, Բանանց գիւղացի մի հասարակ պայտագործ էր. նա գալով Ղազախ իւր արդար վաստակով կարողացաւ մի քանի տարիների ընթացքում միջակ կարողութիւն ձեռք բերել, որից և իւր մահուանից առաջ մասն հանեց հասարակութեան համար. նա իւր կենդանութեան ժամանակ սկսեց եկեղեցու շինութիւնը և դեռ գետնից 1½ արշին միայն բարձրացնելով մեռաւ, սակայն աւանդեց իւր անդրանիկ որդուն, որ եկեղեցու շինութիւնը շարունակի։ Թիֆլիսի կոնսիստորիան լսելով և տեղեկութիւն առնելով, որ Մակի Ջաղէթեանը կտակ է թողել եկեղեցու շինութեան վերաբերմամբ, սկսեց շարունակ թղթեր գրել պ. Ա. Ջաղէթեանին, որ շուտ աւարտի, չիմանալով միայն որ Մակի Ջաղէթեանը եկեղեցու շինութեան համար կանխիկ փող չի թողել, այլ կալուածներ, որոնց եկամտով պիտի հաւաքուէին և՛ հանգուցեալի պարտքերը, և՛ պէտք է ապրէին ժառանգները, որոնց որոշ չափով մաս պիտի հանէր կարողութիւնից։

Ալէքսանդր Ջաղէթեանը կարող էր չշարունակել եկեղեցու շինութիւնը, որովհետև գումար չկար, և եթէ այդպէս վարուէր, եկեղեցին մինչև ցայսօր էլ հիմնուած միայն կըմնար. բայց նա յանձն առաւ կատարել հօր աւանդը և իւր սեփհական գրպանից ծախսելով 11,000 րուբլի՝ եկեղեցին աւարտեց և այսօր

երկրորդ գիծն անցկացնելու համար հարկ չլինի նորից վերադառնալ, միաժամանակ երկու հեծանուոր գնում են ճանապարհի երկու կողմից և քանի առաջ են գնում, նրանց գլանները պտտւում են և թելը ձգւում ճանապարհի երկու կողմով։ Երբ անցնում է կառքը, թելերը հաւաքելու համար յարմարեցրած է մի ուրիշ գործիք։ Իւրաքանչիւր գլանի վրայ փաթաթուած է լինում չորս մղոն երկարութեամբ թել, որը մի ժամուայ ընթացքում է ձգւում և մի ժամում էլ հաւաքւում։ Եթէ ճանապարհը լաւ է, մի խումբ հեծանուորներ կարող են երկու ժամուայ մէջ 20 մղոն թել ձգել։ Ինչ ասել կուզէ, որ սա մեծ յարմարութիւն է զօրապետի համար՝ շուտափոյթ տեղեկութիւն ստանալու և հրամաններ արձակելու համար։

—

Պոմ-պոմ. — Մարդասպանութեան գործիքները քանի գնում, աւելի ու աւելի են կատարելագործւում։ Անգլիական «Վիկկեր որդիք և Մաքսիմ» գործատունը պատրաստել է նոր ձևի թնդանօթներ, որոնք անմիջապէս հարաւային Աֆրիկա ուղարկուելով գործադրուեցան և, ինչպէս ասում են, մեծ էլ յարմարութիւններ է ընձեռում մարդ կոտորելու համար։ Զինուորներն այդ թնդանօթի անունը դրել են «Պոմ պոմ»։ Այդ արագաձիգ թնդանօթի կալիբրը 35 միլիմետր է և ռումբը մի րոպէում անցնում է 550 մետր տարածութիւն, իսկ արձակել կարելի է մինչև 4—5 հազար մետր հեռաւորութեան վրայ։ Ռումբը կշռում է ընդամենը 1 ֆունտ և պայթելիս 15—20 կտոր է լինում։

—

Կով կթելու գործիք.—Կով կթելու համար գործիքները նոր չեն հնարուած, որովհետև այդ միտքը շատ հրապուրիչ է մանաւանդ մեծ տնտեսութիւն ունեցողների համար, որոնք հարկադրուած են միաժամանակ բազմաթիւ կով կթել։ Բայց մինչև այժմ եղած գործիքները համարեա բոլորն էլ անյաջող էին։ Կովը կթելու միջոցին մեծ նշանակութիւն ունի կթող անձնաւորութիւնը, որովհետև կարելի է հազար ու մի եղանակ կթել, նայելով կովի յատկութեանց։ Շատ անասնապահներ պնդում են, որ կթելու միջոցին որոշ չափով արտայայտւում է կթւող կովի կամքը։ Ուստի և այն մեքենան, որ զօրով քամում է կովի կաթը, վնասում է կովին։ Վերջերս հնարուած նոր գործիքն ըստ երևոյթին վերացնում է այդ վատ պայմանները։ գոնէ դա երկու տարի է գործ է ածուել անգլիական ագարակներից մէկում։ Գործիքի կազմութիւնն այսպէս է,—ռետինէ մատնոցանման ամաններ հագցնում են կթւող կովի իւրաքանչիւր պտուկի վրայ զատ զատ. դրանք ներքևից ծակ են և միանում են խողովակի հետ այդ խողովակն էլ միացած է նասոսի (օդամուղ գործիքի) հետ։ Օդամուղն երբեմն քաշում, խողովակից դուրս է հանում օդը և երբեմն օդը նորից ներս ածում խողովակի մէջ, դրա համեմատ էլ ծծի պտուկներն երբեմն սեղմւում են և երբեմն արձակւում, ճիշտ այնպէս, ինչպէս ձեռքով կթելու միջոցին է լինում։

—

Լուսանկարող հրացան.—Վերջերս հնարուած է մի հրացան, որ լուսանկարչութեան համար է յարմարեցրած։ Դա այնպէս է շինուած, որ նշանը համապատասխանում է գործիքի հնոցին (ֆոկուս)։ Հրացանով նշան առնելուց յետոյ հարկաւոր է հուպ տալ զսպանակը, և իսկոյն վայրկենաբար գործող գործիքը կըբացուի և կընկարէ։ Այս գործիքը բոլորովին նման է որսորդական հրացանի. փողի մէջն է օբիէկտիւը և լոյսը նրա միջով ընկնում է կլոր կամ ութանկիւնանի լուսանկարչական շերտի վրայ, որն առանձին գործիքով պտտւում է։ Մի վայրկեանում կարելի է 12 նկար հանել։ Հնարողի անունն է Մարէյ և նա բազմաթիւ պատկերներ է հանել թռչունների թռած միջոցին։

—

Թունաւոր բոռ.—Մինչև այժմ գիտութեան մէջ յայտնի չէ ոչ մի դէպք, որ բոռի խայթոցից մարդ մեռած լինի, թէպէտ և կենդանաբանները չեն կասկածում, որ կան բոռեր, որոնց խայթուածը վտանգաւոր է կենդանի էակների համար։ Անգլիացի բնագէտ Դիստենտ իւր «Կենդանաբանական ճանապարհորդութիւն Տրանսվաալում» գրքի մէջ նկարագրում է Աֆրիկայում պատահող մի քանի բոռերի տեսակները։ Նրանց մէջ կայ մէկը, որ կոչել է «Havpactira gigas» և որի խայթից գորտը սատկում է։ Դիստենտը դիտել է, թէ ինչպէս մի կատու բռնել է մի այդպիսի բոռ և կուլ տուել. մի քանի րոպէ յետոյ կատուի վրայ երևացել են թունաւորուելու նշաններ, բայց երեկոյեան դէմ կատուի ջղաձգութիւններն ու ցաւերն անցել են։ Տրանսվաալում կան բոռեր, որոնք թռչունների նման բոյներ են շինում և խմբով մէջն ապրում. Նրանց բոյները շինում են առանձնացած տեղերում, տապրակի ձևով, և ծածկում տերևներով կարծես ուզելով օտար աչքից ծածկել այդ։ Այդ բոռերն ամենաթունաւոր տեսակներն են և, ինչպէս դիտողութիւններից երևում է, նրանց խայթը շատ անգամ մահացու է լինում կենդանիների համար։

—

Կարծեցեալ մահ եւ ելեկտրականութիւն.—Ելեկտրականութիւնը գործադրւում է կեանքի համարեա թէ ամեն պայմանների մէջ։ Անցեալ տարի մի այսպիսի դէպք էր պատահել.—բժիշկը երեխայի համար իբր դեղ օպի է նշանակում։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ամեն տուածին նշանակւում է մի փոքր չափ։ Բայց հիւանդապահ կինն անհոգութեամբ երեխային տալիս է դեղից այնչափ, որ նոյն իսկ հասակաւորի համար անգամ շատ կարող էր լինել։ Հետևանքը յայտնի է,—երեխան կամաց-կամաց խաղաղում է և վերջապէս խոր քնոյ մէջ ընկղմւում։ Նրա շարժումները դադարում են, շունչը բռնւում, սիրտն էլ չի բաբախում։ Կարծում են, թէ մեռած է։ Կանչում են բժշկին, բժիշկը սաստիկ վախենում է, որովհետև ոչ մի միջոցով չէ կարողանում երեխին ուշաբերել։ Վերջապէս նա բերում է ելեկտրական գործիքը, մէկ ելեկտրոդը դնում երեխի վզին, իսկ միւսը փորին և բաց թողնում հոսանքը։ Որքան մեծ է լինում նրա ուրախութիւնը, երբ երեխան սկսում է նորից շունչ առնել։ Բայց հէնց որ դադարեցնում է ելեկտրական հոսանքը, կեանքի նշաններն էլ դադարում են երևան գալ։ Ստիպուած է լինում ծայրայեղ փորձի ձեռնարկել՝—երեխին ելեկտրականացնել այնքան ժամանակ, մինչև որ նրան բոլորովին ուշաբերի։ Այս փորձն ամբողջ տասը ժամ է տևում։ Գործածածը փոփոխական հոսանք էր։ Վերջապէս հիւանդն սկսում է շունչ քաշել և այս անգամ արդէն շնչառութիւնն ինքնաշարժ էր։ Շուտով բարձրանում է երեխի մարմնի ջերմութիւնը, զարկերակը բաբախում և մեռեալը կենդանանում։ Մի քանի օր անցնելուց յետոյ հիւանդը բոլորովին բժշկւում է։ Այս դէպքը Պրուսիայում է տեղի ունեցել։

—

Արբեցութեան հետևանքը.— Բազէլի համալսարանի պրոֆեսոր Բունգէն, որ մարդակազմային տարրաբանութեան մէջ իւր հետազօտութիւններով հռչակ է ստացած, իւր զեկուցումներից մէկի մէջ հաղորդել է իբրև փաստ, որ արբեցութիւնը մեծ ներգործութիւն ունի կանանց կաթի վրայ՝—այդպիսի կանայք անընդունակ են դառնում իրենց ծծի երեխաներին կաթ տալ։ Նրա ասելով, երեխային ծիծ տալու ընդունակութիւնը ժառանգաբար մօրից անցնում է աղջկանը և այդ հանգամանքի վրայ ոչ մի ներգործութիւն չունին նոյնպէս ժառանգաբար անցնող զանազան հիւանդութիւնները, ինչպէս են թոքախտը, ներվային և հոգեկան հիւանդութիւնները։ Հօր արբեցող լինելը վնասակար ներգործութիւն ունի աղջկայ կաթի վրայ, մանաւանդ այդ հանգամանքը ծանրանում է աւելի ևս, երբ մայրն էլ է արբեցող։

Պրոֆեսոր Բունգէն առ 27 տարի է, որ զբաղուած է մայրական կաթի և ծծի երեխի յարաբերութեան խնդրով և մի շարք փորձեր է արած մայրական կաթի բաղադրութեան վերաբերմամբ։ Բունգէն առաջարկում է երիտասարդներին չկարգուել այնպիսի աղջկանց հետ, որոնք արբեցողի զաւակ են....

Բայց փոքր ինչ անմարդասիրական չէ՞ արդեօք առաջարկուած միջոցը։ Այդպիսի միջոցներով արբեցութեան առաջը չի առնուիլ։ Դա մեզ մասամբ յիշեցնում է Մալթուսի օրէնքը։

Հրատ

արդէն պատրաստ է ու Ղազախի հայ հասակութիւնը մի փառաւոր եկեղեցի ունի:

Եկեղեցու օծման ս. հանդէսը Կրկնազատիկ կիրակի օրը կատարեց Գանձակի յաջորդ Անանիա եպիսկոպոսը Թիֆլիսից, Գանձակից և Ղազախի գիւղերից հրաւիրուած 10 քահանաների հետ միասին: Ըրջակայ գիւղերից մեծ բազմութիւն էր հաւաքուել քաղաք օծմանը հանդիսատես լինելու համար: Եկեղեցին կիրակի առաւօտ ներսից զարդարուեց տեղական ժողովրդականներից և դրսից հրաւիրուած անձերի նուիրաբերած անօթներով, սրբոց պատկերներով և հանդերձներով: Առաւօտեան ժամերգութեան վերջը սրբազանը բոլոր նուիրաբերողներին շարքով կանգնեցրեց բեմի առաջ, իւրաքանչիւրի նուէրն իր գիրկն ու ձեռքը առեց ու հանդիսաւոր կերպով սկսեց սրբել, օծել և օրհնել: Ժամերգութիւնից յետոյ նախ ինքը՝ սրբազանը, ապա քահանաները և ժողովուրդն սկսեցին համբուրել օծուած պատկերները, որից յետոյ բոլորը բազմեցրին իրենց տեղերում, որով կենդանութիւն ստացաւ տաճարի ներսը: Ժողովուրդն սկսեց կուտուել եկեղեցու բակում:

Օծման ս. հանդէսն սկսուեց ժամը 9-ին և վերջացաւ 1½-ին: Եկեղեցում ասեղ ձգելու տեղ չկար. բացուած էին բոլոր դռները, որոնց շէմքերում նոյնպէս խտացած էր ժողովուրդը. հայերի ու բրախութեանը, բացի քրիստոնեաներից, մասնակցում էին նաև թուրքերը, որոնք ապշութեամբ հետևում էին շքեղ հանդիսին: Սրբազան պատարագիչը «յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի» բնաբանով մի քարոզ խօսեց, որով բացատրեց եկեղեցու և կրօնի նշանակութիւնն ու անհրաժեշտութիւնը, կարդաց նուիրաբերողների անուանացուցակը, յորդորեց, օրհնեց և պատուիրեց նրանց, որ սիրեն իրենց եկեղեցին ու հաւատը և հոգուով, սրտով ու անձով էլ մշտական զարդ ու պայծառութիւն լինեն նրա համար: Պատարագից յետոյ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարուեց հանգուցեալ Մակի Ջաղէթեանցի գերեզմանի վրայ, որին հոգևորականութիւնից յետոյ շրջապատել էին նրա բազմաթիւ ժառանգները: Հոգեհանգստից յետոյ սրբազանը առնը կէս ժամ հանգստանալուց յետոյ, 10 քահանայի ուղեկցութեամբ, հրաւիրուեց ճաշի, որ նոյնպէս Ա. Ջաղէթեանի հաշուով պատրաստուել էր քաղաքային այգում, ուր մօտ 200 հրաւիրեալ և 500 ից աւելի հանդիսատես ապասում էր ճաշկերոյթին: Սրբազանը մտաւ պարտէզը, ուր ներկայ էր Ղազախի վարչութեան ամբողջ կազմակերպութիւնը և բոլոր դաւանութեանց աշխարհական ու հոգևոր ներկայացուցիչներ. սրանք բոլորը, ոտքի կանգնելով, յարգանք մատուցին սրբազանին, աջը համբուրեցին և սեղանի օրհնութիւնից յետոյ նստեցին: Ճաշին սրբազանն առաջին բաժակն առաջարկեց Թագաւոր Կայսրի կենացը, երկրորդ իշխ. կառավարչապետինը, երրորդ Վեհափառ Կաթողիկոսինը, ապա առաջարկուեց իրենը և թեմական առաջնորդինը. իսկ երբ եկան հանգուցեալի յիշատակին, սրբազանից թոյլտուութիւն խնդրելով, «Ի՞նչ է մահ և ի՞նչ անմահութիւն» բնաբանով Յարութիւն քահանայ Ճուղուրեանը խօսեց մի տպաւորիչ և ազդու ճառ, որը ռուսաց լեզուով թարգմանեց բժիշկ Աղասարեան, իսկ թուրքերէն թարգմանեց մի ուրիշը, որից յետոյ շնորհակալութիւն յայտնեցին ճառախօս հօրը, որ յաջող կերպով տարաւ իւր խօսքը և բացատրեց մահուան, անմահութեան և ապրելու միտքը: Բժշկի խօսելուց վերջը սրբազանն առաջարկեց թուրք հասարակութեան կենացը և ցանկացաւ սէր, համերաշխութիւն և եղբայրասիրութիւն քրիստոնեաների հետ, այդ ժամանակ թուրքերից յայտնի անձեր մօտեցան և սրբազանի աջն առան, իսկ նրանց առաջնորդող ճարտարախօս Մահմադ էֆէնդին, որ Վեհափառ Հայրապետի առաջ էլ ճառ էր խօսել մի ժամանակ, բարձրացաւ մի հատուած ծառի կոճղի գլուխ և այնտեղից գեղեցիկ կերպով արտաւիրք շնորհակալութիւնը՝ «Թէպէտ մենք կրօնքով և ծէսերով այլ ենք, սակայն պէտք է միշտ եղբայր լինենք. .» ասելով. ապա ծափահարութեան մէջ կոճղից ներքև թռաւ: Սրանից յետոյ խօսեց պ. Արշակ Ագապեանը թէ՝ «Ի՞նչ էր Ղազախը նախնի ժամանակներում և ինչ է այժմ», որից յետոյ, պ. Ա. Ջաղէթեանը, համառօտ կերպով մի հաշիւ տալով հասարակութեանը, եկեղեցու վրայ իւր արած մօտ 12 հազար ռուբլի ծախսը նուիրեց իւր հանգուցեալ հօր յիշատակին և մի բան ցանկացաւ, այն, որ ինքը և իւր ամուսինը, ապա Ջաղէթեան ազգից ազգայում նշանաւոր անձեր թաղուեն եկեղեցու գաւթում արդէն պատրաստուած դամբարանում:

Հասարակութիւնը գոհ և ուրախ տրամադրութեան տակ հեռացաւ այգուց:

Հանդիսական

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

—

Երբեմն այնպիսի քստմնելի տեսարաններ են տեղի ունենում մարդկանց կեանքի մէջ, որոնք մի անգամ ընդ միշտ հաստատում են, թէ մարդ ասուած արարածը գազաններից ամենազզուելին է, էգոիստներից ամենածայրայեղը: «Մարդիկ միմեանց ուտում են» ասացուածքը դատարկ խօսք չէ և ոչ էլ ճարտասանական ոճ, այլ իսկական, ռէալական ճշմարտութիւն է, փաստ է և վերաբերում է ոչ թէ վայրենի մարդակերներին, այլ քաղաքակրթուած եւրոպացիներին իսկ: Եթէ քաղաքակրթուած մարդիկ միմեանց չեն ուտում, այդ նրանից է, որ ժամանակ են ունենում միմեանց ունեցածը և աւելի թոյլի հացը խլելու և ուտելու, բայց հէնց որ դրւում են այն վիճակի մէջ, որ այլ ևս ուտելու ոչինչ չկայ, այն ժամանակ իսկապէս ուտում են միմեանց:

Լոնդոնից ստացուած այսօրուան «Դէյլի Էքսպրէսս» և ուրիշ լրագրները պատմում են մի սոսկալի դէպք, որից մարդու մազերը փշաքաղւում են: Ֆիլիպպեան կղզիների Կաւիտ նաւահանգստից մեկնած «Անջէլա» շոգենաւի վրայ կային 37 հոգի, բացի նաւաստիներից: Նաւը ճանապարհորդութեան վեցերորդ օրը ենթարկուեց փոթորկի, որի ժամանակ 20 հոգի խեղդուեցին, իսկ ազատուած 17 հոգին տեղաւորուեցին երկու նաւակների մէջ. փոքրի մէջ 5 հոգի, իսկ մեծի մէջ 12 հոգի, որոնց թւումն էր նաև նաւապետ Կոոկեր: Առաջ երկու նաւակները միասին էին թափառում ծովի վրայ, բայց փոքրիկ նաւակը երեկոյեան դէմ զոհ գնաց ալիքներին ու մնաց մեծը իւր տասներկու հեծեալներով: Քսան և հինգ օր մեծ նաւակը մնաց բաց ծովում թափառելիս և այդ 25 օրուան ընթացքում 12 մարդիկ մի կաթ ուտելու բան չունէին և մի կաթիլ ջուր չունէին խմելու. նրանք երբեմն երբեմն պատահաբար ծովի երեսից որսում էին խխունջներ, բոյսեր ու կեղտ և ուտում: 25 երորդ օրը նաւարկուներից երկուսը խելագարուեցին և իրենք իրենց ձգեցին ծովը: Քսան և վեցերորդ օրը նրանցից մէկը, ազգով ֆրանսիացի, յանկարծ կացինը ձեռքին յարձակուեց իւր ընկերներից մէկի վրայ, կացինն իջեցրեց նրա գլխին և սկսեց ագահութեամբ խմել սեռնողի գլխից շատրուանի պէս խփող արիւնը, ապա կամեցաւ ուտել նրա ուղեղը, բայց ընկերներն արգելեցին.... որպէս զի երեկոյեան ամենքը միասին ուտեն մեռածի դիակը, և կերան: 27 րդ օրն այդ նոյն մարդը կացինը վերցրեց, որ սպանէ նաւապետ Կոոկէրին, բայց կացինը նրա ձեռքից խլեցին և իրեն սպանեցին. մարմինը կերան և այդպէս շարունակ միմեանց ուտելը շարունակուեց, մինչև որ 12 հոգուց մնացին երկու հոգի մի չվեդացի Յոհաննեն անունով և մի սպանացի Մարթիքոռնու անունով, որոնք անսպասելի կերպով ազատուելով վերջապէս ցամաք ելան և պատմեցին այս սոսկալի պատմութիւնը:

* *
*

Էլի Ամերիկան, միշտ այդ սարսռելի Ամերիկան իւր զարմանալի ու հիանալի քմահաճոյքներով և հաստատամտութեամբ: Ընթերցողը բազմաթիւ օրինակներից տեսել է արդէն, որ այդ զարմանալի երկրում Ասիային ու Եւրոպային առ այժմ անհասկանալի մի բարձրագոյն բարոյական շարժումն է սկսել ու հասարակութիւնն ինքը զարմանալի արագութեամբ արմատախիլ է անում այն ամենն, ինչ որ ընդունակ է փչացնել հասարակական կեանքը և անհետացնել նրա պոէզիան: Այսպէս՝ յայտնի են այն ահագին խաչակրաց արշաւանքները, որ վարւում են անառակութեան, արբեցութեան ու զուտարի դէմ: Իսկ այժմ ամերիկեան հանճարը պատերազմ է յայտնում կեղծ գեղարուեստին և իւր պաշտպանութեան տակ է վերցնում իսկական պոէզիան և գեղարուեստը: Ամերիկացի աշխարհահռչակ հարուստ Անդրև Կառնէժի, որ հազար միլիոն ոսկի կարողութիւն ունի, յայտարարում է, որ ինքը կապալով վերցնում է Նեռեօրկի և Լոնդոնի բոլոր միւզիկ-հոլլ կոչուած կէս-սրճարան, կէս թատրոնները, որպէս զի նրանց շրջանից դուրս վռնտի փողոցային, անվիտ, անբարոյականացուցիչ երաժշտութիւնն ու կոմեդիան և նրանց տեղ հաստատէ Ազքսպիրեան և ուրիշ դասական դրամաներն ու կոմեդիաները և լուրջ դասական երաժշտութիւն, որոնք միակ ընդունակ են մարդկանց իսկական, բարձր հոգեկան զուարճութիւն պատճառելու: Եւ Անդրև Կարնէժի արդէն իրականացնում է իւր մտադրութիւնը և բազմաթիւ նախկին զինեսներում այժմ Լոնդոնի ամենահռչակաւոր դերասանները խաղում են Ազքսպիրի պիէսները և երաժիշտները նուագում են Վագնէրը:

Այդ ներկայացումների մանրամասն նկարագրութիւններն արդէն կան լրագրներում, բայց շատ երկար լինելու պատճառով անկարող եմ առաջ բերել:

* *
*

Ամերիկացի աղջիկներն ամուսին գտնելու արուեստի մէջ իսկ կատարելագործուել են: Լրագրները պատմում են հետևեալը. Կանսասում (սա այն գաւառն է, ուր տիկին Քարի Նէյշընն աւերում է գինետները) մի հարուստ կալուածատէր սաստիկ տխրում էր, որ իւր սրտի ուզածին պէս գեղեցիկ կին չէ գտնում, որ քմահաճոյքներից ազատ լինի և իրեն հաճելի լինի: Տխրութիւնից ստիպուած նա յաճախում էր գինետուն և ժամերով նստելով, գինու բաժակներ դատարկելով, գլանիկները ծխում էր մէկը միւսի յետևից:

Երբ վերջին բաժակը խմեց ու գրգռուած ցանկացաւ գլանիկի թղթեայ տուփից կրկին ծխախոտ վերցնել, տեսաւ որ այլ ևս ծխախոտ չկայ, վերջացել է. բայց տուփի մէջ, յատակից կպցրած էր մի գեղեցիկ օրիորդի պատկեր և անունը տակը գրուած՝ «Օրիորդ Ս.». հասցէն նոյնպէս գրուած էր: Այս հանգամանքը սաստիկ հետաքրքրեց կալուածատէր Ռագոյին, որ անմիջապէս ուղևորուեց այն գիւղը, որի անունը գրուած էր տուփի մէջ, գտաւ այդ օրիորդին ու տեսաւ, որ մի աղքատ, համեստ և շատ գեղեցիկ գործաւորուհի է, որ ոչ մի յոյս չունենալով երբ և իցէ արժանաւոր ամուսին գտնելու, ինքզինքը մխիթարում է եղել նրանով, որ իւր պատկերը գնում է եղել իւր շինած ծխախոտների տուփի մէջ:

Ռագոն և օրիորդը միմեանց հասկացան ու նախկին տուփեր չինող գեղջուկ խեղճ օրիորդն այժմ արդէն Կանսասում տիկին Ռագո է և մայր Նէյշընի կուսակից:

Ս. Հախումեան

Գարիզ:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

—

ԻՏԱԼԻԱ

«Figaro»-ի թղթակիցը, այս օրերս զրուցատրելով ծովակալ Կանեարոյի հետ, որը վերջին մինիստրութեան մէջ արտաքին գործերի մինիստր պաշտօն էր վարում, հարցրել էր նրան, թէ ինչ հայեացք ունին դաշնակից պետութիւններից Գերմանիան և Աւստրիա-Ունգարիան Ֆրանս իտալական մերձեցման վրայ, և ինչպիսի փոփոխութիւններ կարող է ձգել այդ մերձեցումն եւրոպական պետութիւնների խմբակցութիւնների մէջ: Կանեարոն պատասխանել է.

«Եռապետական կամ Ֆրանս ռուսական դաշնակցութիւնների նման միութիւնները այն առանձնայատկութիւնն ունին, որ այդպիսի միութիւններ կարելի է կազմել խիստ կարիքի բոպէին, բայց այնուհետև քանդել այդ միութիւնները հեշտ չէ: Եւ այդ հասկանալի է. այդպիսի դաշնակցութիւնները կազմում են խաղաղութիւնը պահպանելու նկատումներով. լրագրները կարող են բանակոուի ժամանակ ապացուցանել, որ այդ դաշնակցութիւններն սպառնալիք են խաղաղութեան համար, բայց մի շարք խաղաղասիրներն Եւրոպայում հերքում է այդ հայեացքը: Իրար հետ դաշնակցելուց ի վեր Գերմանիան, Իտալիան և Աւստրիան երբէք չեն աշխատել կռուել որևէ պետութեան հետ, նմանապէս և—Ֆրանսիան ու Ռուսիան: Բայց դաշնակցական պայմանագրերը կնքում են որոշ տարիներով և նորոգւում են այդ տարիները լրանալուց առաջ: Հարց՝ ինչ կը պատահէր, եթէ դաշնակից պետութիւններից մէկը կամենար քանդել դաշնակիրը: Նրա դաշնակիցներն այդ մտադրութիւնը թշնամական կընկատէին, նրանք կը զուշակէին, որ իրենց դէմ թշնամական խմբակցութիւն է կազմում և կը շտապէին պատերազմ հրատարակել, օգուտ քաղելով այն ժամանակից, որ կը մնար մինչև դաշնագրի պայմանաժամի լրանալը, որպէսզի յամառող պետութեանն ստիպեն իրենց հետ միասին գործել: Ենթադրենք, օրինակ, որ Իտալիան ուզում է դուրս գալ եռապետական դաշնակցութիւնից, Ռուսիայի և Ֆրանսիայի հետ միանալու համար: Գերմանիան և Աւստրիան կիմանային այդ մտադրութիւնը: Իսկապէս, դաշնագրի պայմանաժամը լրանալուց մի տարի առաջ Իտալիան յայտնում է, որ ինքը չէ ցանկանում նորոգել այդ դաշնագիրը: Ի՞նչ կանեն այդ դէպքում Գերմանիան և Աւստրիան. կը սպասեն արդեօք, որ Իտալիան Ֆրանսիան և Ռուսիան միանալով յարձակուեն իրենց վրայ: Ի հարկէ, ոչ: Ընդհակառակը, նրանք կաշխատեն կարելոյն չափ շուտով վէճ յարուցանել Ռուսիայի կամ Ֆրանսիայի հետ, որպէսզի օգտուեն զինուորական այն ոյժերից, որ ըստ դաշնագրի Իտալիան պարտաւոր է տալ նրանց: Հետևաբար, եռապետական դաշնակցութիւնը քանդելու փորձի հետևանքը պատերազմ կը լինի, բայց ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ Իտալիան այդպիսի մտադրութիւն չունի, և Ֆրանսիան էլ չի սպասում, որ Իտալիան այդպիսի բան անի: Դաշնակցութիւնները քանդում են իրերի բնական զօրութեամբ, նրանք մաշւում են իրենք իրենց, խունանում են ինչպէս գոյներն արևից: Եռապետական դաշնակցութիւնը մի կողմից, Ֆրանսիան ու Ռուսիան միւս կողմից և Անգլիան՝ փոխէ փոխ յարող առաջինին կամ վերջիններին,—այս խմբակցութիւնն Եւրոպային 30 տարի խաղաղութիւն է տուել: Պէտք է այսուհետև ևս գնալ միևնոյն ուղղութեամբ»:

—

ԱՆԳԼԻԱ

«Birmingham Post»-ը հաղորդում է, որ Արևելեան Ասիայում վերջին շաբաթներս կատարուած անցքերը մեծ ազդեցութիւն են ունեցել Անգլիայի և ճափոնիայի յարաբերութիւնների վրայ: «Ճիշտ է,—ասում է յիշեալ լրագիրը,—պաշտօնական դաշնակցութիւնը յիշեալ երկու պետութիւնների միջև դեռ ևս դիւանագէտների համար ցնորք է միայն, բայց վերջին անցքերն այդ դաշնակցութեան իրագործումն աւելի մօտալուտ են կացուցել, քան կարծւում է: Անգլեճափոնական դաշնակցութիւնը կունենայ պաշտպանողական բնաւորութիւն և ուղղուած կըլինի Չինաստանի ամբողջութիւնը պահպանելուն: Մանջուրեան պայմանագրի վերաբերմամբ բրիտանական և ճափոնական կառավարութիւնները խիստ մտերմական հաւաստիացումներ են տուել իրար, բայց այս մասին աւելի որոշակի խօսելն անյարմար է»:

—

ՉԻՆԱՍՏԱՆ

«Daily Express»-ին Զանքհայից հաղորդում են. «Խսիանֆուից ստացուած հաւաստի տեղեկութիւնների համաձայն, արքունիքը խիստ անհանգստացած է այն լուրերից, թէ Դանսուի մահմեդականները պատրաստւում են անջատուել Չինաստանից և անկախ պետութիւն կազմել: Բացի դրանից, Ուրգայի պաշտօնեաները կայսրին հաղորդել են, որ դալայ լաման գլուխ է անցել ապստամբ մոնղոլներին: Առանձին ցեղեր դեռ ևս մարտ ամսին մթերքների պաշարներ ու ձիեր են ձեռք բերել սպասելով ապըստամբութեանը»:

Սակայն միւս կողմից «Ռէյտերի գործակալութիւնը» Պեկինից հեռագրում է, թէ պրինց Յինը հերքում է Մոնղոլիայի ապստամբութեան լուրերը. այդ լուրերի հեղինակները միսիոնարներն են, որոնց վախկոտութիւնը կատարելապէս հասկանալի է և բնական: Յամենայն դէպս Յինը չի կարծում, որ Թունֆուսեանի ապստամբութիւնը լուրջ նշանակութիւն ունենայ:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

Կիտչեները Պրետորիայից հեռագրում է, որ հարաւ-աֆրիկեան կամաւորների 39 վաշտ ապրիլի 10-ին հրաման են ստացել մեկնել ծովափը և նաւ նստելով վերադառնալ հայրենիք:

—Ապրիլի 10-ին Բոմբէյ է հասել մի շոգենաւ գերի բոէրներ տանելով:

—Ստանդերտոնից հաղորդում են, որ տիկ. Բոթան, բոէրների գլխաւոր հրամանատարի կինը, հէնց նոր վերադարձել է իւր ամուսնու մօտից և մեծ յոյս ունի, որ հաշտութիւն կայացնելու համար իւր գործադրած ջանքերն աջողութիւն կունենան: Այժմ նա մեկնել է Պրետորիա, որ Կիտչեներին հայորդի իւր ամուսնուն արած այցը:

—Պաշտօնական տեղեկութիւնների համաձայն, դեռ ևս Օրանժի գաղութում ու Տրանսվաալում գտնուած գերի բոէրների ընդհանուր թիւն է 18,934.

—Կապշտադից հեռագրում են, որ ապստամբները Բուշմանլանդից նահանջ են տուել դէպի Պելլայի մօտ գտնուած բլուրը: Ոմանց ասելով, Դեեսոն ապրիլի 5-ին անցել է երկաթուղին Վոլվերգուկի մօտ, իսկ ուրիշ տեղեկութիւններից երևում է, որ նա գտնւում է Սենեկալի մօտ, իսկ Կրոյցինգերը գնում է Օրանժի գաղութը:

—Ռոսմիդից «Ռէյտերի գործակալութեանը» հեռագրում են, որ բոէրներն ամեն տեղ երևում են փոքրիկ խմբերով. շատ տեղերում ընդհարումներ են տեղի ունենում: Միդդլբուրգի բարձունքներից բոէրներն ազդանշաններ են տալիս ճրագով. նրանք այնտեղ հելիոգրաֆի գործիք են դրել: Բոէրները յաճախ անցնում են երկաթուղին, բայց զրահաւոր գնացքների յաճախակի երևեկութիւնը թոյլ չի տալիս նրանց երկաթուղու գիծը փչացնել:

—Լոնդոնի լրագրների ասելով, Կորկի մօտ գտնուած Կարլաիլ բերդում գտնուած Միլնատերեան ֆուզիլիօրների 5 րդ զօրաբաժինը խռովութիւն է յարուցել. չնայելով սպաների արած նախազգուշացումներին, զօրաբաժինը հրաժարւում է մնալ վրանների մէջ։ Թէև զինուորներից խլուած է զէնքը, բայց Կորկում և հարեան քաղաքներում նրանց խռովարար վարմունքը մի քիչ անհանգստութիւն է պատճառում։

—Գեկինից հեռագրում են, որ Անգլիայի, Ֆրանսիայի, Միացեալ Նահանգների, Հոլլանդիայի, Բելգիայի և Իտալիայի դեսպանները, որոնց յանձնուած էր դատական պաշտօնեաներին պատժելու խնդիրն ի նախնական քննութիւն, դիւանագիտական մարմնին մի զեկուցում են ներկայացնել, որի մէջ ցանկութիւն են յայտնում, որ դարձեալ չորս մանդարին մահուան պատժի ենթարկուեն և դարձեալ 80 մանդարին էլ արտաքսուեն և պաշտօնանկ լինեն։ Դեսպաններն այս պահանջներն ուղարկեցին չինական լիազօրներին։

—Զանքհայից հեռագրում են, որ Չինաստանից պահանջուելիք վարձատրութիւնը հաւասար է 450,000,000 տաէլի։

—Մակեդոնական կոմիտեի նոր նախագահ Միխայլովսկին նորից հաւատացնում է, որ շարժումն առաջ կըտանի օրինական սահմաններում և իր ջանքերը կուղղի այն բանին, որ Բերլինի դաշնագիրն իրագործուի և, եթէ հնարաւոր է, վերաքննուի։

ԹԵՐԵՒԴԵՄ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ձեր լրագրի № 38 ում տպուած էր մի նամակ Թաւրիզից Ա. Ա. ստորագրութեամբ, որը իւր էութեամբ նուիրուած էր Թաւրիզի Հայուհեաց Բարեգործական Ընկերութեան Լիլաւա թաղում պահած կարուձևի արհեստանոցին։

Նամակագիրը մեղադրում է այն բանում, թէ արհեստանոցում 3 ժամ ճաշից առաջ, 2 ժամ ճաշից յետոյ անընդհատ պարապմունքներ են լինում, և դրա համար աշակերտուհիների բողոքները մնացել են անհետևանք։—Սխալ է. աշակերտուհիները հանգստութեան միջոցներ ունին, բացի ճաշամիջոցի հանգստութեան ժամից, իսկ բողոք ոչ մի ժամանակ և ոչ մի դէպքում տեղի չէ ունեցել։

Գ. նամակագիրը 3 տարի ընթացք է նշանակել (իւր կողմից) արհեստը սովորելու համար, և ցաւում է, որ այսչափ ժամանակ յաճախողները մի պարզ ժիլէտ ձեռ ու կարել չեն իմանում և իրը օրինակ է բերում Կովկասը, ուր շրջանը 3—6 ամիս է *)։

Նախ ընկերութեան արհեստանոցը 3 տարի շրջան չունի, այլ առաւելն 2 տարի. շատ աննշան թիւ կարող են կազմել անընդունակները, որ իրենց խնդրանքով մի տարի աւելի շարունակած լինին։ Գարոնը պիտի լաւ իմանայ, որ Թաւրիզը Թիֆլիս չէ. գուցէ Թիֆլիսում միշտ լինում են արհեստանոցի աշակերտուհիներ, և դարմանալի էլ չէ, որոնք քիչ ժամանակում կատարելագործում են արհեստը, շնորհիւ այն հանգամանքի, որ նրանք մեծ պաշար են տանում իրենց հետ ուսումնարանից և ընտանիքից. մինչդեռ Թաւրիզում շատ անգամ արհեստանոց եկող օրիորդները ասեղ բռնել չեն իմանում. չէ՞ որ դրանք պէտք է սովորեն և՛ կարել, և՛ ձևել. դա 3—6 ամսում կատարուող գործ չէ։

Գարոնը հաւատացնել է կամեցել միամիտ ընթերցողներին, թէ 3 տարիներով արհեստանոց երթևեկող սանուհիք ոչինչ չեն սովորել։ Ասում ենք, դա բացարձակ զրպարտութիւն է։ Թաւրիզում այժմ նոր տարազի զգեստ հագնելը՝ հայ ընտանիքների շրջանում ընդհանրացած է արդէն. ովքեր են այդ պահանջին բաւարարութիւն տուողները, արհեստանոցից աւարտողները չեն արդեօք. այսօր պակաս չեն ընկերութեան արհեստանոցն աւարտածներ, որոնք կար ու ձևով ընտանիք են ապրեցնում։ Եթէ պարոնը դիմէ մեզ, պատրաստ ենք իրեն ցոյց տալ և ապացուցանել։ Գ. Ա. Ա. իւր զէնքերն ուղղել է արհեստանոցի ուսուցչուհուն, անուանելով նրան անհմուտ իւր արհեստին ու անտեղեակ մայրենի լեզուին և այլ լեզուներին։

Թէպէտ ընկերութեան պահած ուսուցչուհին ազատ տիրապետում է ռուսերէն լեզուին և շատ լաւ է իմանում իւր մայրենի լեզուն՝ խօսելով, գրելով և հաշուելով, սակայն մենք չենք պատասխանում մի այդպիսի անիմաստ խօսքի, որին արժանաւոր պատասխան տուել էր խմբագրութիւնդ իւր կողմից նրա նամակի ներքևում. իսկ ինչ վերաբերում է ուսուցչուհու անձնական համեստութեանն ու արհեստի հմտութեանը, համարձակ կարելի է ասել, որ նա վկայեալ արհեստաւոր է և լրիւ տիրապետած իւր արհեստին, որ 3 տարի գործելով ընկերութեանս արհեստանոցում՝ ցոյց է տուել համեստ ջանասիրութիւն և արժանացել է Թաւրիզեցոց համակրութեանը. օրիորդն աւարտել է Կովկասում և իբրև պաշտօնեայ ծառայել է Թիֆլիսի հայ. բարեգործ. ընկերութեան արհեստանոցում։

Գ. Թղթակիցը խորհուրդներ է տալիս ընկերութեան արհեստանոցի օրիորդներին, երևի, շեշտել ուզենալով նրանց մտաւոր կրթութեան գործը.—Թէպէտ և արհեստանոցի բացման նպատակը եղել է տնային անտեսութեան և արհեստը տարածելու գործը, բայց ընկերութեան վարչութիւնը փափագելով անմասն չանել մտաւոր զարգացման գործից այլ և այլ առանձնակներում մտցրել է արհեստանոցում զանազան առարկաների դասաւանդութիւնը, ինչպէս այս տարի ևս օրիորդներին աւանդում է թուաբանութիւն, իբրև արհեստին լրացուցիչ առարկայ, և յատկացրել է շաբաթական որոշ ժամեր գրքերի և լրագրների ընթերցանութեան համար. դրանից աւելին ընկերութեան ձեռնտութիւնից վեր է։

Մեզ յայտնի չի, թէ ինչ փորձառութիւն պ. Ա. Ա., որ դառն զրպարտութեանց է ձեռք մեկնել անուանարկելով ընկերութեան հաստատութիւնն անբարոյականութեան մէջ. պարոնն ուզել է մի հարուածով ցեխի մէջ գցել թէ ընկերութեան գործունէութիւնը և թէ արհեստանոցը, առանց խնայելու պարսկահայ կանանց քրտինքով ու աշխատութեամբ կառուցուած այն շէնքը, որ տարիների ընթացքում սովորում են և դեռ ևս պիտի սովորին համեստ ընտանիքի համեստ օրիորդները։ Մենք հրաւիրում ենք պարոնին ուղղակի հրապարակ հանել իւր փաստերը և համոզել հասարակութեանը դրական ապացոյցներով. հակառակ դէպքում ընկերութիւնը կարհամարհէ որպէս թշնամական զրպարտութիւններ, որպիսիք պակաս չեն եղել ընկերութեան գործունէութեան փշոտ շաւղի վրայ։

Յարգելի խմբագիր, հաճեցէք մի անկիւն շնորհել մեր սոյն գրութեանը «Նոր Դար» ի էջերում։

Թաւրիզի հայուհեաց բարեգործական ընկերութեան նախագահ՝

Սրբուհի Ամատունի

Խմբագիր հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Պետերբուրգ, 10 ապրիլի

Վեքսելի կուրսը երեք ամսով

Լոնդոնի վրայ 10 ֆունտ ստեր. համար.	93,70
Բերլինի վրայ 100 մարկի համար.	45,90
Պարիզի ,, 100 ֆրանկի ,,	37,30
Վեքսելի կուրսը չէքերով.	
Լոնդոնի վրայ.	94,60,
Բերլինի ,, ...	46,30
Պարիզի ,, ...	37,60
Բորսային դիսկոնտը. . . .	5¹/₄—7¹/₄%
4% պետական ռենտ. . . .	96¹/₈ սակ.
4% ներքին 3, 3, 4 փոխառ. 1891 թ.	—
4¹/₂% ներքին 2, 3, 4 փոխառ. 1893 թ.	100 ծախ.
4¹/₂ ազն. կալ. բանկի գրաւթղ.	96 սակ.
5% առաջին ներքին խաղարկ. փոխառութ. 1864 թ. . .	353 սակ.
5% երկրորդ ներքին խաղարկ. փոխառութ. 1866 թ. . .	287¹/₂ սակ.
5% ազն. կալ. բանկի խաղարկ. գրաւթղթերը.	220¹/₂ սակ.
3¹/₂% պետ. ազն. կալ. բանկի գրաւթ.	89 գն.
5% ոսկու ռենտը 1884 թ.	155¹/₂
Թիֆլիսի քաղ. վարկի ընկ. .	93
Օրլիգացիաները	95 ծախ.
Թիֆլիսի կալ. բանկի 5% գրաւ.	93¹/₂ ծախ.
Քութայիսի ,, ,, 6% ,,	— ծախ.
,, ,, ,, 5% ,,	93 գն.

Բորսայի տրամադրութիւնը ամուր է։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Սրանով հրաւիրւում են Ա.ետեաց (Ջրգրաչէնու) ս. Աստուածածին եկեղեցու բարեպաշտ ծխականները Յիշեալ եկեղեցին, ամսոյս 15-ին կիրակի օրը, ժամը 12 ին, քննելու եկեղեցու երէցփոխ պ. Աղ. Քալանթարեանի 1900 թուականի եկեղեցական ելևմտից հաշիւները։

Գործակալ ա. մ. եկ. Հ. Թիֆլիսի
Զաքարիայ քահ. Զարդեղեան

(605) 2—1

ՀՐԱՒԷՐ

Ապրիլի 15-ին, կիրակի առաւօտեան ժամը 10 ին, Հուղուրէթի ս. Աստուածածնի եկեղեցումը ժողով է լինելու, նոր երէցփոխան ընտրելու, ուստի սրբանով մեծապատիւ պ. պ. ծխերն երկրորդ անգամ հրաւիրւում են ներկայ լինել յիշեալ եկեղեցումը ընտրութեանը մասնակցելու։

Գործակալ ը. մասին Թիֆլիսի
Գրիգոր ա. քահանայ Մանդակունի

(595) 3—2

Ձեռնտու պայմաններով ծախւում է

ՄԻ ԿԱԼՈՒԱԾՔ

Թիֆլիսի 9 րդ քաղաքամասում, լաւ փողոցի վրայ։ Կալուածքն ունի 24 սենեակ, պարտէզ, ջուր և այլ յարմարութիւններ։ Պայմանների մասին կարելի է տեղեկանալ «Նոր Դար» ի խմբագրատանը։ 5—3

ԵՐՏԻՍԱՐԴ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ

ԳԻՐԱԿԻ ԱՊՐԻԼԻ 15-ԻՆ

ԴԵՐԱՍԱՆ ԳԱԼՓԱՅԵԱՆԸ

Մասնակցութեամբ օր. Խրիստոբեանի, տիկնայք Զաբէլի և Նազելիի, պ. պ. Մանդենեանի, Դնունու, Ամօյի, Միրզոյեանի, Բաբուրեանի, Ռիբինեանի, Ցէր Ղազարեանի, Արէշեանի, Սափարեանի և այլոց կներկայացնէ

ԵՐԿՐՈՐԴ ԱՆԴԱՄ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԱՆՈՒՆ

„ՀԱՄԼԷՏ"

Ողբերգ 5 արարք. և 10 պատկեր
Հեղ. Շէքսպիրի

Տոմսակները ծախւում են թատրոնի կասսայում։

Սկիզբն է երեկոյեան 8 ժամին։

(602) 2—1

ԽՄԲԱՊԵՏ

ԱՐՏԱՇԵՍ ՉՕՄԱՐԵԱՆ

Լրացնելով Զամախում իմ պաշտօնավարութեան ժամանակը, ցանկանում եմ և ուրիշ տեղեր պատրաստել եկեղ. քառ. երգեցիկ խումբ։ Տեղեակ եմ նաև ժամարգութեան։ Իմ հասցէն՝ Тифлисъ, Норашенская ул. № 4. 3—2

„ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ"

անուան տակ նոր կազմակերպուող ընկերութիւնն երկու սեռի այն անձերին, որոնք գրուել են փայերի Տէր-Սարգսեանի և Բորոկշեի մօտ և որոնք ցանկանում են գրուել մնացած փայերին ևս, հրաւիրում է շնորհ բերել

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,

որը լինելու է քաղաքային խորհրդարանի դահլիճում, *չորեքշաբթի, սոյն ապրիլի* 18-*ին, երեկոյեան ժամը* 7-*ին*, պայմանագրի ծրագիրը վերաքննելու և ընկերութեան գործերը վարող անձեր ընտրելու համար։

(602) 3—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով յայտարարում է, որ ապրիլի 18-ին, օրուայ ժամը 1-ին, Վարչութեան շինութեան մէջ *աճուրդ* է նշանակուած, կապալով տալու Ալէքսանդրեան այգու միջին մասում 30 քառ. սաժէն գետին մի պաւիլիոն շինելու, ուր կրծախուն կաթ, թէյ, սուրճ, շոկոլադ, զովացուցիչ ջրեր և սառը նախաճաշիկ։ Աճուրդին պէտք է ներկայացնել 100 բուբլու չափ գրաւական։ Պայմանների մանրամասնութեան հետ կարելի է ծանօթանալ վարչութեան շինութեան մէջ բոլոր գործի օրերին, առաւօտեան ժամը 10-ից մինչև օրուայ ժամը 2-ը։

(603) 3—1

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ

սրանով ծանուցանում է, որ իւր ատելանում ապրիլի 16-ին, օրուայ ժամը 12 ին, աճուրդ է նշանակուած շինելու 77,50 սաժ. 0,42×0,28 սաժ. և 120,00 սաժ. 0,365×0,25 սաժ. լեռոնի ջրամբար արդէն Դոլինսկու դռների մօտ գոյութիւն ունեցող ջրամբարից մինչև Ռուկէի տունը՝ Անդրէևսկայա փողոցի վրայ 4000 բուբլի արժողութեամբ։ Աճուրդին մասնակցել ցանկացողները կարող են պայմաններին ծանօթանալ քաղ. վարչութեան շինարարական բաժնում բոլոր գործի օրերին, առաւօտեան ժամը 9-ից մինչև՝ օրուայ ժամը 3-ը։

(598) 3—2

(М.)№1 29

За успѣшныя занятія благодарности

Лучшія аттестаціи отъ учебнаго начальства.

И. Я. БРОНЪ-ФОНЪ-БРЕННЕРЪ

преподаетъ

Полный курсъ БУХГАЛТЕРІИ

ПРЕДМЕТЫ ЗАНЯТІЙ:

1) Бухгалтерія (двойная италіянская), 2) Коммерческая ариѳметика 3) Коммерческая экономія. 4) Ариѳметика на счетахъ, 4) Торговыя и вексельныя узаконенія и 5) Коммерческая корреспонденція.

Курсъ 3-хъ-мѣсячный. Занятія ежедневныя. Плата за курсъ 60 руб. Ручательство и гарантія за успѣхи. Болѣе 1000 окончившихъ курсъ.

Михайловская № 71.

Собственный методъ преподаванія по собственнымъ сочиненіямъ, продающимся во всѣхъ книжныхъ магазинахъ.

Занятія съ 1-го числа

480) Годъ зоній динадцатый 100—5

Преподав. ведется по советв. сочиненіямъ

(М)90634 52—42

М. 164456 6—5

*) Բայց 3—6 ամսում Թիֆլիսումն էլ շատ բան չեն սովորում։ Խմբ.

Доз. цензурою Тифлисъ, Апрѣля 12-го дня 1901 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. пр., № 12 Телефонъ 387